



Հաստատված է

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ
Խորհրդի նիստի որոշմամբ առ 24.07.2012 թ.

Խորհրդի Նախագահ
Գագիկ Զաքարյան

ՓՈՒՍԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ /ԲԵՌՆԵՐԻ/ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ
4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՄԿԵՐ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ
7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)
8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ
10. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՄԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ
12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
13. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
14. ՍՈՒԲՐՈԳԱՑԻՍ
15. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ
16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- 1.1. Ապահովագրող՝ «ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծված և ՀՀ տարածքում ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:
- 1.2. Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ փոխադրվող գույքի ապահովագրության պայմանագիր կնքած իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձ:
- 1.3. Շահառու՝ Ապահովադրի կողմից Ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցումներ ստանալու համար նշանակված իրավաբանական կամ ֆիզիկական անձ:
- 1.4. Ապահովագրության դիմում՝ Ապահովագրողի պահանջով վերջինիս սահմանած տիպային ձևով Ապահովադրի կողմից գրավոր ներկայացվող տեղեկություններ: Դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից՝ համաձայն Ապահովադրի կողմից տրամադրված տեղեկատվության: Դիմումում ներառված տեղեկությունների իսկությունն Ապահովադիրը հաստատում է իր ստորագրությամբ:
- 1.5. Ապահովագրության օբյեկտ՝ Ապահովադրի կամ Շահառուի՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք կապված են ապահովագրված գույքի վերջիններիս տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքների հետ:
- 1.6. Ապահովագրության պայմանագիր (Պայմանագիր)՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վճարի դիմաց ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հատուցել Ապահովադրին կամ այլ անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրն, այն վնասը, որն առաջացել է այդ պատահարի հետևանքով: Պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների նկատմամբ:
- 1.7. Ապահովագրական հատուցում՝ գումար, որը Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովադրին՝ Ապահովագրական պատահարի ի հայտ գալու ժամանակ: Ապահովագրական հատուցման գումարը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել Ապահովագրական գումարի չափը:
- 1.8. Ապահովագրական պատահար՝ Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի վրա հասնելու արդյունքում առաջանում է Պայմանագրով նախատեսված Ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:
- 1.9. Ապահովագրական ռիսկ՝ պատահարի (դեպքի) պատահական տեղի ունենալու և (կամ) վնասի հասցման հավանականություն, որի հետ կապված իրականացվում է ապահովագրությունը:
- 1.10. Ապահովագրական գումար՝ Պայմանագրով սահմանված գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում, Պայմանագրով նախատեսված կարգով վճարել ապահովագրական հատուցում:
- 1.11. Ապահովագրավճար՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված չափով Ապահովադրի կողմից Ապահովագրողին ապահովագրության դիմաց վճարվելիք գումար, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին Պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով:
- 1.12. Չհատուցվող գումար (ֆրանշիզա)՝ Պայմանագրով նախատեսված վնասի այն մասն է, որը ենթակա չէ Ապահովագրողի կողմից հատուցման և կարող է սահմանվել

ինչպես բացարձակ մեծությամբ, այնպես էլ Ապահովագրական գումարի կամ ապահովագրական հատուցման նկատմամբ հաշվարկվող տոկոսի միջոցով:

- 1.13. Աբանդոն՝ Ապահովադրի (Շահառուի) ապահովագրված գույքի հանդեպ ունեցած իր իրավունքներից Ապահովագրողի օգտին հրաժարվելը՝ ամբողջ ապահովագրական գումարի չափով ապահովագրական հատուցում ստանալու նպատակով:
- 1.14. Ընդհանուր վթար (general average)՝ բեռնափոխադրող նավին և բեռին սպառնացող ընդհանուր վտանգից դրանք փրկելու համար կատարված արտակարգ ծախսերի, այդ թվում նաև զոհաբերման (օրինակ՝ հրդեհը մարելու ժամանակ բեռը նավից դուրս նետելը, խորտակումից փրկելու համար նավը դիտավորյալ ծանծաղուտի մեջ զցելը և այլ նմանատիպ միջոցառումներ) հետևանքով առաջացած վնաս: Այս դեպքում, համաձայն բեռնափոխադրման միջազգային սովորույթների և եթե նման բան սահմանված է բեռնափոխադրման պայմանագրում, առաջացած վնասը բաշխվում է բեռնափոխադրման մասնակիցների միջև:
- 1.15. Մասնակի վթար (particular average)՝ վնաս, որը չի առաջացել ընդհանուր վթարի հետևանքով, օրինակ՝ բեռի կորուստ, ֆիզիկական վնաս կամ ոչնչացում: Մասնակի վթարի վնասը կրում է այն կողմը, որին այդ վնասը պատճառվել է կամ որը պատասխանատու է այդ վնասի առաջացման համար:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Ցանկացած դեպք, որը ներառված չէ ապահովագրական ծածկույթում չի համարվում ապահովագրական պատահար:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

3.1. Սույն Պայմանների համաձայն ապահովագրության սուբյեկտներ են համարվում Ապահովագրողը, Ապահովադիրը, Շահառուն:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

4.1. Ապահովագրության օբյեկտ է համարվում անձի գույքային շահերը, կապված Պայմանագրով ապահովագրված բեռների տնօրինելու, տիրապետելու, օգտագործելու իր իրավունքների հետ՝ բեռի (ապրանք, ուղեբեռ կամ այլ բեռ) վնասվելու կամ կորստի (ոչնչացման) դեպքում՝ անկախ դրա տեղափոխման ձևից, ինչպես նաև այլ գույքային շահերը կապված տվյալ բեռներից սպասվելիք շահույթի, դրանց փոխադրման միջնորդավճարի, նավավարձի հետ, եթե դրանք առանձին նշված են ապահովագրության պայմանագրով:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Ապահովագրողի պարտականությունների ծավալը որոշվում է Ապահովադրի կողմից ընտրված և ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրության ներքոհիշյալ ռիսկերով (կամ դրանց համակցությամբ):

5.1. «Ա» ռիսկեր / «Ապահովագրություն բոլոր ռիսկերից»

5.1.1. Սույն կանոնների 5.1 կետի համաձայն հատուցվում է բոլոր հնարավոր դեպքերում ապահովագրված բեռի կորստի (ոչնչացման) կամ վնասման արդյունքում առաջացած վնասը՝ բացառությամբ սույն կանոնների 5.6 կետում նշված դեպքերի:

5.2. «Բ» ռիսկեր / «Մասնակի վթարի համար պատասխանատվությամբ»

5.2.1. Սույն կանոնների 5.2 կետի համաձայն ապահովագրված բեռի կորստի (ոչնչացման) կամ վնասման արդյունքում առաջացած վնասները, բացառությամբ սույն Պայմանների 5.6 կետում նշված դեպքերի, հատուցվում են, եթե վնասն առաջացել է՝

- փոխադրամիջոցի վրա հրդեհի բռնկվելու կամ պայթյունի տեղի ունենալու,
- բեռնանավի շրջվելու, ափ դուրս շարժվելու, ծանծաղուտում հայտնվելու, խորտակման,
- օդանավի կործանման, գնացքի երկաթգծերից դուրս գալու, ցամաքային տրանսպորտային միջոցի հետ բախման,
- փոխադրամիջոցի ցանկացած արտաքին օբյեկտի հետ բախվելու, բացառությամբ ջրի հետ շփման,
- նավահանգստում բեռնաթափման (ջրային տրանսպորտով փոխադրելու ժամանակ),
- երկրաշարժի, հրաբխի ժայթքման կամ կայծակի հարվածի,
- բեռի ծովի, գետի կամ լճի ջրով թրջվելու,
- նավը նավաբեկությունից փրկելու համար բեռը նավից դուրս նետելու, ինչպես նաև բեռի նավից ալիքներով քշվելու արդյունքում:

Հատուցվում է նաև բեռի վնասվելու արդյունքում առաջացած այն կորուստը, որն ընդհանրապես առաջացել է բեռի բեռնաթափման, բեռնման և փոխադրամիջոցից դուրս ընկնելու հետևանքով:

5.3. «Գ» ռիսկեր / «Առանց մասնակի վթարի համար պատասխանատվության»

5.3.1. Սույն կանոնների 5.3. կետի համաձայն ապահովագրված բեռի կորստի (ոչնչացման) կամ վնասման արդյունքում առաջացած կորուստները՝ բացառությամբ սույն Պայմանների 5.6. կետում նշված դեպքերի, հատուցվում են, եթե վնասն առաջացել է.

- փոխադրամիջոցի վրա հրդեհի բռնկվելու կամ պայթյունի տեղի ունենալու,
- բեռնանավի շրջվելու, ափ դուրս շարժվելու, ծանծաղուտում հայտնվելու, խորտակման,
- օդանավի կործանման, գծերից դուրս ընկնելու, ցամաքային տրանսպորտային միջոցի հետ ճանապարհատրանսպորտային պատահարի,
- փոխադրամիջոցի ցանկացած արտաքին օբյեկտի հետ բախվելու, բացառությամբ ջրի հետ շփման,
- նավահանգստում բեռնաթափման (ջրային տրանսպորտով փոխադրելու ժամանակ),
- նավը փրկելու համար բեռը նավից դուրս նետելու արդյունքում:

5.4. Բացի այդ «Ա» (5.1. կետ), «Բ» (5.2. կետ) և «Գ» (5.3. կետ) ռիսկերի գծով ապահովագրության դեպքում ապահովագրական պատահարի ժամանակ հատուցվում են.

5.4.1 Վթարի հետ կապված, դրա արդյունքում առաջացած ընդհանուր վնասները, ծախսերը և վճարումները (բեռի ջրային տրանսպորտով փոխադրելու դեպքում):

5.4.2 Ապահովագրական պատահարի արդյունքում առաջացող վնասները նվազեցնելու, ապահովագրված բեռը փրկելու, վնասի չափը որոշելու համար իրականացված անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը (եթե վնասը ապահովագրության պայմանների համաձայն հատուցվող է):

5.4.3 Ծովային փոխադրման պայմանագրի (որը ներառում է «բախում, որը տեղի է ունեցել երկու կողմերի մեղավորության պատճառով» դրույթը) ծախսերը, եթե փոխադրվող ապահովագրված բեռի մասով առաջացած վնասը ապահովագրության պայմանագրով ենթակա է հատուցման և

Ապահովադիրն Ապահովագրողին իրավունք է տվել նավատիրոջ կողմից իրեն որևէ պահանջ առաջադրելու դեպքում ներկայացնել իր շահերը:

5.5. 5.4.1. կետում նշված ծախսերն են.

5.5.1 բեռի, վառելիքի կամ մատակարարման առարկաների բեռնանավից լիխտերներ փոխաբեռնման և հակառակը, բեռի բեռնման ժամանակ բեռնանավի ծանձադուտի մեջ ընկնելու դեպքում կատարված չնախատեսված ծախսերը,

5.5.2 Դժբախտ պատահարի կամ որևէ արտակարգ իրավիճակի հետևանքով նավի նավահանգիստ կամ բեռնման վայր ետ վերադառնալու արդյունքում կատարված ծախսերը, եթե դրա անհրաժեշտությունը պայմանավորված էր անվտանգության պահպանման պահանջներով:

5.5.3 Ծախսեր, որոնք կապված են բեռի, վառելիքի, մատակարարման ապրանքների տեղափոխման, կայանատեղիում կամ նավահանգստի վայրում բեռնաթափման, հետբեռնման հետ, ինչն արվել է ընդհանուր անվտանգության կամ նավի վնասված այն հատվածները վերանորոգելու համար, որոնք առաջացել են դժբախտ պատահարի կամ այլ արտակարգ իրավիճակի հետևանքով, եթե այդ վերանորոգումն անհրաժեշտ էր ուղերթն անվտանգ շարունակելու համար:

5.6. Չեն հատուցվում այն վնասները, որոնք առաջացել են հետևյալ դեպքերում.

5.6.1 Ապահովադրի (Շահառուի) կամ նրա ներկայացուցչի դիտավորյալ գործողությունների, ինչպես նաև որևէ մեկի կողմից բեռնափոխադրման, բեռի ետ ուղարկման, պահպանման համար սահմանված կանոնները խախտելու դեպքում:

5.6.2 Ջերմաստիճանի կամ խոնավության, նավամբարի օդի կամ բեռի առանձնահատուկ հատկությունների և բնական որակի ազդեցության արդյունքում, ներառյալ չորացումը, ժանգը, բորբոսը, քաշի կամ ծավալի կորուստը, ինչպես նաև ապահովագրված բեռի մաշվածությունը, դեֆեկտը:

5.6.3 Կոմերցիոն պրակտիկայում սովորական համարվող քաշից, քանակից և ծավալից տարբերության առկայության դեպքում, եթե ապահովագրության պայմանագրում սույն դեպքով հատուկ սահմանված չէ ֆրանշիզա:

5.6.4 Բեռի ոչ համապատասխան տեղավորման (փաթեթավորում, խցանափակում) և բեռը վնասված ուղարկելու արդյունքում:

5.6.5 Միջուկային պայթյունի, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակի ազդեցության արդյունքում:

5.6.6 Փոխադրամիջոցի, կոնտեյների, լիֆտվանի բեռի ապահով փոխադրման (պահպանման) համար անպիտան (ծովագնացության համար անպիտան) լինելու արդյունքում, եթե Ապահովադիրը և նրա աշխատակիցները իմացել կամ կարող էին իմանալ այդ մասին բեռնման ավարտի ժամանակ:

5.6.7 Ռեզմական գործողությունների, գորավարժությունների կամ ռազմական միջոցառումների և նրանց հետևանքների, արկերից, տորպեդներից և պատերազմի այլ զինատեսակներից վնասվելու կամ ոչնչանալու, ավազակային գործողությունների, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմների, ժողովրդական խռովությունների և գործադուլների, զինվորականների կամ պետական մարմինների հրահանգով, այդ թվում մաքսային, սանիտարական և կարանտինային ծառայությունների կողմից բեռը առգրավելու, բռնագրավելու, կալանքի տակ դնելու կամ ոչնչացնելու արդյունքում:

- 5.6.8 Արտաքին փաթեթավորման առկայության դեպքում՝ բեռի պակասորդի, դրա վրա ոչ ամբողջական կապարակնիքների առկայության դեպքում:
 - 5.6.9 Բեռը որդերի, կրծողների և միջատների կողմից վնասվելու արդյունքում:
 - 5.6.10 Այն նյութերի պայթյունի կամ հրկիզվելու դեպքում, որոնք պայթյունի և ինքնահրկիզման տեսանկյունից վտանգավոր են և գտնվում են փոխադրամիջոցի վրա Ապահովադրի (Շահառուի), բայց ոչ Ապահովագրողի գիտությամբ:
 - 5.6.11 Բեռի առաքման ուշացման և դրա հետևանքով բեռի գնի փոփոխման արդյունքում: Չեն հատուցվում նաև Ապահովադրի (Շահառուի) կրած ցանկացած այլ անուղղակի վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրով նման վնասները ենթակա են հատուցման:
 - 5.6.12 Սառեցնող սարքավորումների խափանման արդյունքում:
- Ապահովագրության պայմանագրով, որը կնքվել է սույն կանոնների 5.2. և 5.3. կետերով սահմանված պայմանների համաձայն, չեն հատուցվում նաև այն վնասները, որոնց առաջացման պատճառն են.
- Փոխադրամիջոցի ջրագատումը և բեռի թրջվելը մթնոլորտային տեղումներից:
 - Բեռի արժեզրկումը տարայի աղտոտվելու կամ վնասվելու, արտաքին փաթեթավորման ոչ ամբողջական լինելու դեպքում:
 - Երրորդ անձանց անօրինական գործողությունները:
 - Բեռի գողությունը, թալանը կամ պակասորդը:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- 6.1. Ապահովագրական գումարի չափը սահմանվում է կողմերի համաձայնությամբ, սակայն այն չի կարող գերազանցել Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրված գույքի իրական արժեքի չափը (ապահովագրական արժեք):
- Բեռի ապահովագրական արժեքը որոշվում է հետևյալի հիման վրա.
1. Գնի, որը նշված է դրա առուվաճառքի պայմանագրում՝ ավելացրած առաքման ծախսերը, եթե դրանք ներառված չեն գնի մեջ:
 2. Հաշիվ-ապրանքագրերի (ինվոյսների և բանկային այլ վճարային փաստաթղթերի):
 3. Տրանսպորտային փաստաթղթերի և բեռնափոխադրման հաշիվների:
 4. Ինկոտերմս կանոնների, որոնք ներառում են ապրանքի (բեռի) արժեքը, որը նշված է առուվաճառքի պայմանագրում՝ ավելացրած 10%:
- 6.2. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել ինչպես բեռի ամբողջական արժեքի, այնպես էլ նրա մի մասի համար: Այն դեպքերում, երբ բեռը ապահովագրվել է ընդհանուր արժեքից որոշակի տոկոսային հարաբերակցությամբ, ապա բոլոր օբյեկտները (իրերը) համարվում են ապահովագրված իրենց արժեքի նույն տոկոսային հարաբերակցությամբ:
- 6.3. Ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրական գումարը նվազում է վճարված հատուցման չափով: Ապահովագրական գումարի նվազեցումն իրականացվում է ապահովագրական հատուցման տրամադրման վերաբերյալ որոշման կայացման օրը:
- 6.4. Ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով: Կողմերի համաձայնությամբ Ապահովագրության պայմանագրում Ապահովագրական գումարը կարող է նշվել արտարժույթով, որի համարժեքը համարվում է համապատասխան գումարը դրամով, որը հաշվարկվում է պայմանագրի կնքման օրվա դրությամբ տվյալ արտարժույթի համար սահմանված ԿԲ փոխարժեքով (այսուհետ՝ ապահովագրություն արժույթային համարժեքով): Ապահովադիրն իրավունք ունի Ապահովագրության պայմանագրով սահմանել համապատասխան

սահմանափակումներ կապված ապահովագրական գումարի արժույթի փոխարժեքի մեծության փոփոխման հետ:

7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

7.1. Ապահովագրության պայմանագրով կողմերը կարող են սահմանել չհատուցվող գումար: Պայմանական չհատուցվող գումար սահմանելիս Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում տրամադրելու պարտականությունից, եթե վնասի չափը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, հակառակ դեպքում Ապահովագրողը հատուցում է առկա վնասն ամբողջությամբ: Ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանելիս Ապահովագրողը ցանկացած դեպքում ապահովագրական հատուցում տրամադրելիս չհատուցվող գումարի չափով ազատվում է հատուցման տրամադրման պարտականությունից (բացարձակ կամ տոկոսային հարաբերակցությամբ):

7.1.1. Չհատուցվող գումարը համարվում է ոչ պայմանական և նվազեցվում է ապահովագրական գումարից յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Ապահովագրավճարի չափը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարից:

8.2. Ապահովագրողն ապահովագրության պայմանագրով վճարման ենթակա ապահովագրավճարի չափը որոշելիս կիրառում է իր կողմից մշակված ապահովագրական սակագները: Ապահովագրավճարի չափը սահմանվում է՝ ելնելով ապահովագրության պայմաններից, բեռի բնույթից, փոխադրամիջոցի տեսակից, ուղերթից:

8.3. Ապահովագրավճարը վճարվում է միանվագ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

8.4. Եթե ապահովագրության պայմանագրով սահմանված է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման կարգ, ապա ապահովագրության պայմանագիրը համարվում է դադարեցված հերթական ապահովագրավճարի վճարման համար նախատեսված ժամկետներում դրա չվճարման պահից:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

9.1. Ապահովագրության պայմանագիր կնքելու համար Ապահովադիրն Ապահովագրողին ներկայացնում է գրավոր դիմում: Ապահովագրության դիմումի ձևը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

9.2. Ապահովագրության դիմումը լրացվում է Ապահովադրի (նրա ներկայացուցչի) կամ նրա կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ Ապահովագրողի ներկայացուցչի կողմից: Բոլոր դեպքերում լրացված դիմումը ստորագրվում և դրանում պարունակվող տեղեկությունների իսկությունը հաստատվում է Ապահովադրի (նրա ներկայացուցչի) կողմից:

Ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ ընդհանուր փաստաթուղթ կազմելու միջոցով, որը ենթակա է կողմերի կողմից ստորագրման և կնքման(ապահովագրության պայմանագիր, գլխավոր վկայագիր):

- 9.3. Այն դեպքում, երբ ապահովագրության վկայագրի (գլխավոր պայմանագրի) բովանդակությունը չի համապատասխանում ապահովագրության սույն պայմաններին, գերակայությունը տրվում է ապահովագրության վկայագրին:
- 9.4. Ապահովագրության սույն պայմանները, ապահովագրության դիմումը համարվում են ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը:
- 9.5. Ապահովագրության պայմանագիրը կողմերի համաձայնությամբ կնքվում է ցանկացած ժամկետով:
- 9.6. Ապահովագրողի պարտականությունները բեռների ապահովագրության պայմանագրով ծագում են այն ժամանակ (ապահովագրավճարի կամ Պայմանագրով ապահովագրավճարի տարածակետ վճարման կարգ սահմանված լինելու դեպքում դրա առաջին մասի վճարված լինելու դեպքում), երբ բեռը տեղափոխված է լինում պահեստից (պահպանման վայրից) փոխադրման վայր, գործում է Պայմանագրով սահմանված բեռնափոխադրման ուղերթի ողջ ընթացքում և դադարում է գործել հետևյալ դեպքերից մեկի՝ առաջինն ի հայտ գալուց հետո, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.
- 9.6.1. Բեռը ապահովագրության պայմանագրով սահմանված նշանակման վայրի պահեստ կամ այլ պահպանման վայր առաքելու դեպքում:
- 9.6.2. Բեռնանավից ապահովագրված բեռի ապահովագրության պայմանագրում նշված բեռնաթափման նավահանգստում բեռնաթափումից 60 օր անց:
- 9.7. Ապահովագրության պայմանագիրը դադարում է գործել նաև հետևյալ դեպքերում.
- 9.7.1. Գործողության ժամկետը լրանալու,
- 9.7.2. Ապահովագրողի կողմից պայմանագրով սահմանված իր բոլոր պարտականությունները կատարելու,
- 9.7.3. Իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման կամ ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան դեպքում (եթե չկա իրավահաջորդ),
- 9.7.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման,
- 9.7.5. Ապահովագրության պայմանագիրը դատարանի կողմից անվավեր ճանաչվելու,
- 9.7.6. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 9.8. Ապահովագրության պայմանագիրը Ապահովադրի նախաձեռնությամբ, ինչպես նաև կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելու դեպքում:
- 9.9. Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրից վաղաժամ հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման:
- 9.10. Համանման պայմանների հիման վրա որոշակի ժամանակահատվածի համար բեռի տարբեր խմբաքանակների ապահովագրությունը կողմերի համաձայնությամբ կարող է իրականացվել ապահովագրության գլխավոր պայմանագրով:
- 9.10.1. Ապահովադիրը պարտավոր է բեռի գլխավոր պայմանագրով ապահովագրված բեռի յուրաքանչյուր խմբաքանակի մասին պայմանագրով սահմանված ժամկետներում տեղեկացնել Ապահովագրողին վերջինիս տրամադրելով Ապահովագրողի կողմից սահմանված անհրաժեշտ տեղեկություններն, իսկ եթե Պայմանագրով այդպիսի տեղեկությունների տրամադրման համար ժամկետ նախատեսված չէ, ապա հայտնել դրանք Ապահովագրողին նշանակման վայրում իրավասու անձի կողմից բեռը ստանալուց հետո: Ապահովադիրը չի ազատվում վերոհիշյալ պարտականությունից անգամ, եթե կորուստների ի հայտ գալու հնարավորությունը, որոնք ենթակա կլինեն հատուցման Ապահովագրողի կողմից, արդեն վերացել են:
- 9.10.2. Ապահովադրի պահանջով Ապահովագրողը պարտավոր է բեռի յուրաքանչյուր խմբաքանակի համար տալ ապահովագրական առանձին վկայագիր:

9.10.3. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում վճարելուց, եթե Ապահովադիրը Պայմանագրով կամ սույն Պայմաններով սահմանված ժամկետներում չի տեղեկացրել իրեն բեռի առանձին խմբաքանակների փոխադրումների մասին:

10. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

10.1. Ապահովադիրը պարտավոր է Պայմանագրի կնքման պահին տվյալ ապահովագրության գծով այլ ապահովագրական ընկերությունների հետ կնքված ապահովագրության այն պայմանագրերի մասին, որոնք գործելու են Պայմանագրի հետ միաժամանակ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին: Տվյալ ծանուցման մեջ պետք է նշված լինեն վերոհիշյալ ապահովագրական ընկերության անվանումը, այդ ապահովագրական ընկերության հետ կնքված ապահովագրության պայմանագրի համարը, պայմանագրի գործողության ժամկետը, ապահովագրված ռիսկերը, ապահովագրական գումարը և չհատուցվող գումարը: Ապահովադիրը պարտավոր է նույն կերպ Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրի կնքումից հետո կնքվելիք ապահովագրության նույնօրինակ պայմանագրերի մասին՝ դրանց կնքումից 5 աշխատանքային օր առաջ:

10.2. Եթե Ապահովադիրը կնքել է ապահովագրության պայմանագիր, Պայմանագրում նշված բեռի նկատմամբ մի քանի ապահովագրական ընկերության հետ (կրկնակի ապահովագրություն), ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրում տվյալ ռիսկի գծով նշված ապահովագրական գումարի և բոլոր ապահովագրության պայմանագրերում նշված ապահովագրական գումարների հանրագումարի հարաբերության համամասնությամբ որոշված գումարի չափով, որը սակայն չի կարող գերազանցել տվյալ պահին ապահովագրված բեռի շուկայական արժեքը:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

11.1. Ապահովադիրը պարտավոր է անհապաղ Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրված ռիսկերին վերաբերող էական պայմաններում տեղի ունեցած փոփոխությունների մասին, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալներով՝ Ապահովադիրի կողմից ապահովագրության դիմումով Ապահովագրողին հայտնված տեղեկություններում փոփոխությունների տեղի ունենալը, ապահովագրության պայմանագրում նշված ուղերթից շեղում, երթաշրջանի համար սահմանված ժամկետից ուշացում, բեռնման, բեռնաթափման, բեռի նշանակման վայրի, այլ փոխադրամիջոց բարձելու, տեղափոխման ձևերի փոփոխում, բեռը ձմեռելու թողնելը, եթե Պայմանագրով այն նախատեսված չէ և այլն:

11.2. Ապահովագրողը, որը տեղեկացված է այն հանգամանքների մասին, որոնք կարող են հանգեցնել ապահովագրական ռիսկի մեծացման, իրավունք ունի Ապահովադիրից պահանջել ապահովագրության պայմանագրում համապատասխան փոփոխությունների կատարում՝ մասնավորապես Ապահովագրական գումարի նվազեցում կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում՝ ապահովագրական ռիսկի մեծացմանը համապատասխան: Եթե Ապահովադիրը դեմ է գործող ապահովագրության պայմանագրում փոփոխությունների կատարմանը կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարելուն, Ապահովագրողն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով միակողմանի դադարեցնել ապահովագրության պայմանագրի գործողությունը:

11.3. Ապահովադրի կողմից սույն Պայմանների 11.1 կետում նշված պարտականությունների չկատարման դեպքում Ապահովագրողն ազատվում է ապահովագրության պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարման պարտականությունից՝ ապահովագրված օբյեկտին վերաբերող կամ դրան որևէ կերպ առնչվող էական փոփոխության ի հայտ գալու պահից:

12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. Ապահովագրողը պարտավոր է.

12.1.1. Տրամադրել Ապահովադրին Պայմանների մեկ օրինակ:

12.1.2. Կնքել ապահովագրության պայմանագիրը ՀՀ օրենսդրության և սույն Պայմանների համաձայն:

12.1.3. Ապահովադրի կողմից ապահովագրական վկայագրի կորստի դեպքում տրամադրել նրան դրա կրկնօրինակը՝ համաձայն Ապահովադրի գրավոր դիմումի:

12.1.4. Կազմել ապահովագրական հատուցում տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու գրավոր հիմնավորված որոշում Ապահովադրի (Շահառուի) կողմից դրա համար սույն Պայմանների 13.2 կետով սահմանված բոլոր անհրաժեշտ այն փաստաթղթերի տրամադրումից հետո, որոնք հաստատում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և դրա պատճառները, առաջացած վնասի չափը:

12.1.5. Չհրապարակել կամ այլ կերպ երրորդ անձանց հայտնի չդարձնել Ապահովադրի (Շահառուի), նրա ունեցվածքի մասին իրեն հայտնի տվյալները:

12.2. Ապահովագրողն իրավունք ունի.

12.2.1. Ապահովագրության պայմանագիր կնքելիս զննել ապահովագրության դիմումում նշված բեռը, այն փոխադրամիջոցը, որով տվյալ բեռը փոխադրվելու է և անհրաժեշտ փաստաթղթերը:

12.2.2. Մասնակցել ապահովագրական պատահարների քննությանը:

12.2.3. Հարցումներ ուղարկել իրավասու մարմիններին՝ համապատասխան այնպիսի փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու նպատակով, որոնք հաստատում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, դրա պատճառները և առաջ եկած վնասի չափը:

12.2.4. Նշանակել սյուրվեյեր (փորձագետ) ապահովագրական ռիսկի գնահատման, ապահովագրական պատահարի քննություն անցկացնելու համար՝ նպատակ ունենալով ճշգրիտ որոշել ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, դրա պատճառները և առաջացած վնասի չափը:

12.2.5. Հետաձգել ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշման կայացումը, եթե իրավասու մարմինների կողմից հարուցվել է քրեական գործ՝ կապված վնասների հանգեցրած և Ապահովադրի (Շահառուի) կողմից մատնանշված դեպքի հետ՝ մինչև իրավասու մարմնի կողմից համապատասխան վերջնական որոշման կայացումը:

12.2.6. Մերժել ապահովագրական հատուցման հայտն այն դեպքերում, երբ Ապահովադիրը (Շահառուն) չի իրականացրել կամ ոչ պատշաճ կերպով է իրականացրել Պայմանագրով, սույն Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունները:

12.3. Ապահովադիրը պարտավոր է.

12.3.1. Ժամանակին և ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով վճարել ապահովագրավճարը:

- 12.3.2. Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական ռիսկի գնահատման համար:
- 12.3.3. Ապահովագրողին հայտնել ապահովագրված բեռի նկատմամբ տնօրինման, տիրապետման, օգտագործման իրավունքների իրավատերերի փոփոխությունների մասին:
- 12.3.4. Ապահովագրողի համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ նրա կողմից իրականացվող այն միջոցառումների (բեռի զննում, փոխադրամիջոցի փորձաքննություն, դրա շահագործման պայմանների ուսումնասիրում, ապահովագրական պատահարների քննությանը մասնակցություն և այլն) անցկացման համար, որոնք կապված են ապահովագրության պայմանագրի կնքման և պայմանագրի գործողության ընթացքում դրա սպասարկման, դրանով սահմանված պայմանների պատշաճ կատարման հետ:
- 12.4. Ապահովագրական պատահարի դեպքում.
 - 12.4.1. Անհապաղ քայլեր ձեռնարկել ապահովագրական պատահարի արդյունքում առաջացող վնասների չափի նվազեցման ուղղությամբ:
 - 12.4.2. 24 ժամվա ընթացքում, սկսած այն պահից, երբ նրան հայտնի է դարձել ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին, իրեն հասանելի ցանկացած եղանակով հայտնել դրա վերաբերյալ Ապահովագրողին:
 - 12.4.3. Քայլեր ձեռնարկել ապահովագրական պատահարի վերաբերյալ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ձեռք բերելու և Ապահովագրողին հանձնելու, ինչպես նաև ապահովագրական հատուցում ստանալու դեպքում մեղավոր կողմի նկատմամբ Ապահովագրողի հետադարձ պահանջի իրավունքի իրականացման հնարավորության ապահովման համար:
 - 12.4.4. Ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո անհապաղ կազմակերպել Ապահովագրողի կողմից վնասված բեռի զննումը և/կամ ապահովագրական պատահարի հանգամանքների ուսումնասիրումը:
- 12.5. Ապահովադիրն իրավունք ունի.
 - 12.5.1. Ծանոթանալ սույն Պայմաններին մինչև ապահովագրության պայմանագրի կնքելը:
 - 12.5.2. Ապահովագրության պայմանագրում նշված Շահառուին փոխարինել այլ անձով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ապահովագրողին: Պայմանագրում նշված Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե նա կատարել է Պայմանագրով սահմանված որևէ պարտականություն կամ ապահովագրական հատուցում ստանալու դիմում է ներկայացրել Ապահովագրողին:

13. ՎՆԱՍԻ ՉՍՓԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՉՍՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 13.1. Ապահովագրական հատուցումը տրամադրվում է Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին ներկայացված ապահովագրական հատուցում ստանալու գրավոր դիմումի հիման վրա Ապահովագրողի կողմից կայացված ապահովագրական հատուցում տրամադրելու որոշմամբ:
- 13.2. Ապահովագրական հատուցման վճարման դիմումին Ապահովադիրը (Շահառուն) կցում է.
 - 13.2.1. Ապահովագրության վկայագիրը:
 - 13.2.2. Բեռն ապահովագրելիս դրա հանդեպ ունեցած գույքային շահն ապացուցելու համար՝ կոնտսամենտներ, երկաթուղային, ավտո և ավիա ապրանքագրեր և փոխադրման այլ փաստաթղթեր, ինվոյսներ, ֆակտուրաներ և հաշիվներ, եթե այդ փաստաթղթերի բովանդակության համաձայն Ապահովադիրն իրավունք

ունի տնօրինել բեռները ֆրախտի, չարտեր-պարտիայի պայմանագրով կամ կոնոսամենտներով:

- 13.2.3. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստն ապացուցելու համար՝ ծովային բողոքագիր, գրություն նավամատյանից, քրեական գործ հարուցելու մասին որոշում, ՃՈ արձանագրություններ, եզրակացություններ և այլ պաշտոնական ակտեր, որտեղ նշված են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, դրա պատճառները, փոխադրամիջոցի անհետ կորելու դեպքում՝ սահմանված համապատասխան կարգով փոխադրամիջոցն անհետ կորած ճանաչելու համար հավաստի վկայություններ փոխադրամիջոցի ուղերթի սկզբնակետից ժամանակին դուրս գալու մասին, ինչպես նաև սահմանված ժամկետում ժամանման վայր դրա չժամանելու մասին:
- 13.2.4. Վնասի չափն ապացուցելու համար՝ վթարային տեսուչի կողմից կազմված բեռի գնման ակտեր, փորձագիտական ակտեր, գնահատականներ և այլ փաստաթղթեր՝ կազմված այն տեղի օրենսդրությամբ կամ կարգով, որտեղ որոշվում է վնասի չափը, իրականացրած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, իսկ վթարին վերաբերող ընդհանուր վնասների, ծախսերի հատուցման պահանջի դեպքում՝ փաստաթղթային հաստատված հաշիվ կամ ակտ:
- 13.3. Ծախսերի հատուցումը չի կարող գերազանցել ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը:
 - 13.3.1. Սպասվող շահույթի, միջնորդավճարի և այլ ծախսերի ապահովագրությունը, որը կապված է բեռնափոխադրման հետ, (սույն կանոնների 4.1. կետ) տեղին է միայն Ապահովադրի (բեռնատիրոջ) մոտ համապատասխան գույքային շահերի առկայության դեպքում և իրականացվում է նույն պայմաններով, ինչ բեռի ապահովագրությունը: Նավափոխադրավճարը հաշվարկվում է՝ ելնելով փոխադրվող բեռի քաշից, չափից, արժեքից և սահմանվում է կողմերի համաձայնությամբ՝ ելնելով նավափոխադրման այն գներից, որոնք կիրառվում են բեռի բեռնման (բեռնաթափման) վայրում:
- 13.4. Ապահովագրական հատուցման տրամադրման կամ մերժման վերաբերյալ հիմնավորված որոշումը (եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով) կազմվում և հաստատվում է Ապահովագրողի կողմից դրա համար անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 13.5. Ապահովագրական հատուցումը (եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ) վճարվում է Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման տրամադրման որոշումը կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 13.6. Ապահովադիրը (Շահառուն) կարող է տվյալ բեռի ապահովագրական գումարի մնացորդային չափով հատուցում ստանալու նպատակով Ապահովագրողի համաձայնությամբ հօգուտ Ապահովագրողի հրաժարվել ապահովագրված գույքի նկատմամբ իր իրավունքներից (արբանդոն) հետևյալ դեպքերում՝
 1. Բեռի ամբողջական փաստացի կորուստ (ոչնչացում),
 2. Գույքի վերականգնման կամ ապահովագրված բեռն առաքման վայր հասցնելու տնտեսական աննպատակահարմարություն:

Նշված դեպքերում Ապահովագրողին են անցնում.

1. Ապահովագրված գույքի հանդեպ բոլոր իրավունքները, եթե գույքն ապահովագրվել է ամբողջական արժեքով:
2. Ապահովագրված գույքի մասնաբաժնի նկատմամբ իրավունքները, ապահովագրական գումարի գույքի իրական արժեքի նկատմամբ

հարաբերակցության համամասնությամբ՝ գույքը ոչ ամբողջ արժեքով ապահովագրված լինելու դեպքում:

13.7. Բեռի ամբողջական կորուստը (ոչնչացումը) ենթադրում է, որ վնասված բեռի մնացորդային արժեքը վերականգնողական ծախսերի հետ միասին գերազանցում է բեռի իրական արժեքը պայմանագրի կնքման պահին:

13.7.1. Վերականգնողական ծախսերը ներառում են.

1. Շինանյութերի ծախսերը:
2. Վերականգնողական աշխատանքների համար իրականացվող ծախսերը:
3. Այլ ծախսեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրված գույքի (բեռի) այն վիճակի վերականգնման համար, որում այն գտնվում էր մինչ ապահովագրական պատահարը:

13.8. Գույքի վերականգնումը կամ ապահովագրված բեռն առաքման վայր հասցնելը համարվում է տնտեսապես աննպատակահարմար, եթե վերականգնման համար անհրաժեշտ նյութերի, վերականգնման աշխատանքների և ապահովագրված օբյեկտը նշանակման վայր հասցնելու ընդհանուր արժեքը, համաձայն ապահովագրության պայմանագրի, նշանակման վայր հասնելու պահին գերազանցում է փրկված ապահովագրության օբյեկտի արժեքը:

13.9. Աբանդոնի մասին հայտարարությունը Ապահովագրողին պետք է արվի ՀՀ գործող օրենսդրության համաձայն, և պետք է լինի ոչ պայմանական և չի կարող ետ կանչվել Ապահովադրի կամ Շահառուի կողմից:

13.10. Եթե բեռը ստանալու ժամանակ բեռնաստացը գրավոր ձևով չի տեղեկացրել բեռնափոխադրողին բեռի պակասորդի կամ վնասված լինելու մասին, ապա համարվում է, որ նա բեռը ստացել է բեռնափոխադրման պայմանագրի պայմանների (կոնտսամենտի, ապրանքատրանսպորտային ապրանքագրի, ավիա կամ երկաթուղային ապրանքագրի և այլն) համաձայն:

Եթե բեռի պակասորդը կամ վնասվածքը հնարավոր չէ հայտնաբերել բեռի ընդունման ժամանակ, ապա այդ մասին բեռնափոխադրողին գրավոր պետք է տեղեկացվի բեռը ստանալուց հետո եռօրյա ժամկետում: Եթե նման պայմաններում բեռնաստացը բեռնափոխադրողին բեռի պակասորդի կամ վնասված լինելու մասին գրավոր չտեղեկացնի, դա կարող է Ապահովագրողի համար ապահովագրական հատուցման տրամադրման մերժման հիմք հանդիսանալ:

13.11. Այն դեպքերում, երբ ապահովագրական պատահարի արդյունքում հասցված վնասը հատուցվել է երրորդ անձանց կողմից, ապա Ապահովագրողը վճարում է հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանց կողմից Ապահովադրին (Շահառուին) վճարված գումարի տարբերությունը:

13.12. Այն դեպքերում, երբ ապահովագրական հատուցում վճարելուց հետո հայտնի է դառնում, որ Ապահովադիրը (Շահառուն) որևէ հիմքով իրավունք չունեք ստանալու ապահովագրական հատուցումը, վերջինս պարտավոր է վերադարձնել ապահովագրական հատուցումը Ապահովագրողին Ապահովագրողի կողմից նման պահանջ ներկայացվելուց հետո հնգօրյա ժամկետում:

13.13. Այն դեպքում, երբ ապահովագրության պայմանագրում (ապահովագրական վկայագրում) ապահովագրական գումարը սահմանված է արժույթային համարժեքով, ապա հատուցումն իրականացվում է ՀՀ դրամով՝ ապահովագրական հատուցման օրվա դրությամբ տվյալ արժույթի համար ՀՀ ԿԲ փոխարժեքով հաշվարկված գումարի չափով կամ ապահովագրության պայմանագրում նշված արժույթով: Եթե տվյալ արժույթի համար ՀՀ ԿԲ փոխարժեքն ապահովագրական հատուցման օրը 20 և ավելի տոկոսով բարձր է քան ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրը ՀՀ ԿԲ-ի կողմից տվյալ արժույթի համար սահմանված փոխարժեքն, ապա ապահովագրական հատուցումը հաշվարկելիս օգտագործվում է տվյալ արժույթի

համար ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքն ապահովագրական պատահարի օրվա դրությամբ՝ գումարած 20%:

14. ՍՈՒԲՐՈԳԱՑԻՍ

14.1 Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

14.2 Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

14.3 Ապահովադիրը (շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով ապահովագրողին վերջինիս փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

14.4 Եթե ապահովադիրը (շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և/կամ իրավունք ունի պահանջելու վերադարձնել տվյալ դեպքով արդեն իսկ վճարված հատուցման գումարը:

15. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

15.1 Ապահովագրության պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի համաձայնությամբ:

15.2 Ապահովագրության պայմանագրում փոփոխություններ և լրացումներ անելու անհրաժեշտության մասին Ապահովադիրը պարտավոր է գրավոր ձևով հայտնել Ապահովագրողին ողջամիտ ժամկետներում:

15.3 Ապահովագրության պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են գրավոր:

16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16.1 Սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրերից բխող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը քննվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

16.2 Վնասի չափի և դրա առաջացման պատճառների վերաբերյալ վեճերի առաջացման դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փորձաքննության անցկացում: Լրացուցիչ փորձաքննությունն անց է կացվում այն պահանջած կողմի հաշվին: Եթե փորձաքննությունն անց է կացվել Ապահովադրի հաշվին, և փորձաքննության արդյունքները ճանաչվել են Ապահովագրողի կողմից, ապա վերջինս հատուցում է Ապահովադրին փորձաքննության եզրակացության մեջ նշված վնասի չափով: Ընդ որում, հատուցման ընդհանուր չափը չի կարող գերազանցել ապահովագրական պատահարի պահին Ապահովագրողի պատասխանատվության ընդհանուր չափը: